ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19,

25 հոկտեմբեր 2021թ.

Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի նախագահին

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածի 1-ին մասի և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 65-րդ հոդվածի 1-ին մասի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ եմ ներկայացնում «Պետական կենսաթոշակների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Պետական նպաստների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը:

Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն գրությանը կցվում են՝

ա) ՀՀ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության որոշումը,

բ) նախագիծը (հիմնական զեկուցող՝ Աղվան Վարդանյան),

գ) նախագծի ընդունման հիմնավորումը,

դ) գործող օրենքում փոփոխվող հոդվածի մասին տեղեկանքը,

Առաջարկում ենք ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՀԱՅԱՍՏԱՆ ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **ԱՐԾՎԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

25.10.2021թ.

ՈՐՈՇՈՒՄ

Առաջնորդվելով «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ Սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և 2-րդ մասով և 65-րդ հոդվածի 1-րդ մասով՝ՀՀ Ազգային Ժողովի «Հայաստան» խմբակցությունը

Որոշեց՝

1. ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնել «Պետական կենսաթոշակների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» և «Պետական նպաստների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը:
2. Նախագծի հիմնական զեկուցող նշանակել ՀՀ Ազգային ժողովի «Հայաստան» խմբակցության պատգամավոր Աղվան Վարդանյանին:

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ «ՀԱՅԱՍԱՏԱՆ»

ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **ԱՐԾՎԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ**